ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

N

12 հուլիսի, 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԲԱԽՄԱՉԳԱԶԲՈՒԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Հիմնադրամ) կողմից «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող, կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրի շրջանակներում ՀՏԶՀ-ի կողմից **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել է **«ԲԱԽՄԱՉԳԱԶԲՈՒԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ**-ն, որի հետ 2024 թվականի հունիսի 06-ին «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքվել է թիվ **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50-1** ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 18-րդ կետի՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետի 3-րդ պարբերության՝ պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Հիմնադրամի կողմից 2024 թվականի հունիսի 07-ին «ԲԱԽՄԱՉԳԱԶԲՈՒԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին է ուղարկվել թիվ **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-**

Հայաստանի Հանրապետություն, 0037, Երևան, Կ. Ուլնեցու 31
Հեռ.՝ (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 0037, Republic of Armenia
Tel.:(37410) 247 123

2024/50-1 ծածկագրով Պայմանագրի Համաձայնագիրը՝ ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու հիմքով:

«ԲԱԽՄԱՉԳԱԶԲՈՒԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ–ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից ծանուցմամբ սահմանված ժամկետում չեն ներկայացվել ստորագրված համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները, որի պայմաններում Հիմնադրամը, ղեկավարվելով Պայմանագրի 8.10 կետով, 2024 թվականի հունիսի 27-ին Պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումն է ուղարկել «ԲԱԽՄԱՉԳԱԶԲՈՒԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին: :

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով Օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու դեպքերը, այդ թվում՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը *հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը* կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Տվյալ դեպքում առկա է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքը, մասնավորապես՝ Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու, իսկ ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի **«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 1-ի N 172-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 256-Ն որոշմամբ:**

Վերոնշյալից հետևում է, որ ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու պարագայում հիմք ընդունելով Պայմանագրի 8.13-րդ կետը, կողմերը ստանձնել են պարտավորություն՝ կնքելու համաձայնագիր:

Տվյալ դեպքում համաձայնագրի օրինակը՝ համապատասխան բանկային երաշխիքներով համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության կողմից չի ներկայացվել:

Այսպիսով, Ընկերությունը Պայմանագրով ստանձնել է պարտավորություն՝ ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու հիմքով համաձայնագրի կնքման վերաբերյալ, և դրանք սահմանված ժամկետում համաձայնագիր չկնքելու, համապատասխան բանկային երաշխիքներ չներկայացնելու հիմքով խախտել է

Պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որի արդյունքում Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Միաժամանակ հարկ է նշել, որ «ԲԱԽՄԱՉԳԱԶԲՈՒԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները չեն վճարվել:

Նման պայմաններում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու օրենքով սահմանված միաժամանակյա երկու վավերապայմաններն առկա են՝

-Ընկերությունը գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը չի կատարել, որը *հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը* և,

- Ընկերությունը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և 2-րդ մասը ՝

Որոշեցի

1. «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիմքով «ԲԱԽՄԱՉԳԱԶԲՈՒԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում :

2. Սույն որոշումը տրամադրել լիազոր մարմնին և ծանուցել «ԲԱԽՄԱՉԳԱԶԲՈՒԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին:

Գործադիր տնօրեն Ս. Բաղինյան

Հայաստանի Հանրապետություն, 0037, Երևան, Կ. Ուլնեցու 31
Հեռ.՝ (37410) 247 123

K. Ulnetsu st. 31, Yerevan, 0037, Republic of Armenia
Tel.:(37410) 247 123